

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԵՎ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Հետազոտող ուսուցիչ՝

Նուբար Պետրոսյան

անուն, ազգանուն

Դպրոց՝

<< Կապանի N2 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանումը

Մենթոր ուսուցիչ՝

Թագուհի Ղոնյան

անուն՝ ազգանուն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Տվյալ թեմայի արդիականությունը** 2020 թվականի գարնանը ՀՀ-ի բոլոր դպրոցները անցան հեռավար կրթության՝ նոր կորոնավիրուսային վարակի՝ Covid-19- ի տարածման պատճառով: Այն իրավիճակում, երբ անհապաղ անհրաժեշտություն կար նոր ձևաչափով աշխատելու, արագ վերակազմակերպվելու՝ ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների մեծ մասը լուրջ խնդիրների առաջ կանգնեցին: Մինչ համաճարակը, ուսուցիչների և ուսանողների մեծամասնության մեջ թվային տեխնոլոգիաներով աշխատելու մակարդակը ցածր էր, և միայն քչերն էին կարողանում օգտվել էլեկտրոնային կրթական հարթակներից:

**Հետազոտության նպատակը** հեռավար ուսուցման մանկավարժական պայմանների մշակումն է:

### **Հետազոտության խնդիրներն են՝**

1. ուսումնասիրել հեռավար ուսուցման կազմակերպումը ՀՀ-ում արդյունավետությունը և դրա ներդրման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցներում,
2. ներկայացնել հեռավար ուսուցման առավելագույն թերությունները,
3. մշակել և առաջարկել հեռավար ուսուցման կազմակերպման մանկավարժական պայմաններ դպրոցում,

**Հետազոտության առարկան** հեռավար ուսուցումը գործընթացն է

**Աշխատանքի նորույթը.** 2020 թվականի գարնանը հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցները ստիպված եղան շտապ անցնել հեռավար ուսուցման ձևաչափին, և այս թեման գործնականում ուսումնասիրված չէ:

### **Հետազոտության մեթոդներ.**

- հարցազրույց,
- դիտում (դասալսում)
- հարցաթերթիկներ:

## ԳԼՈՒԽ 1.

# ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

### 1. 1. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՀ ում

Թեև ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ հաստատվել էր «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը», ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 27-ի N 1348-Ա/Ք հրամանով հաստատվել էր «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույցը», սակայն 2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործող ոչ մի բուհի կամ մասնաճյուղի որևէ մասնագիտության գծով հեռավար ուսուցման կազմակերպման թույլտվություն (լիցենզիա) դեռևս չէր տրվել: Սահմանված չեն նաև այն պահանջները, որոնց առկայության և բավարար լինելու դեպքում միայն կարող է տրամադրվել հեռավար ուսուցման կազմակերպման լիցենզիա:

Այդ ուղղությամբ որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել ինչպես ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերում, այնպես էլ բարձրագույն կրթության գործող պետական կրթական չափորոշիչներում:

2016 թվականի վերջին ամիսներին հանրապետությունում կազմակերպվեցին հեռավար փորձնական դասընթացներ՝ միայն հանրակրթական դպրոցների մասնակցությամբ: [1]

2020 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի հրամանով հաստատվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպման կարգը հաստատվել է հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.5-րդ կետը՝ սահմանել «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպման կարգ»-ը՝

- Հեռավար կրթությունն իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:
- Հեռավար կրթություն կարող են կազմակերպել հանրակրթական հիմնական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները, ինչպես նաև Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում գործող հեռավար ուսուցման կենտրոնը՝ ՀՈԻԿ-ը:
- Հեռավար կրթության մասնակիցներն են սովորողները, ուսուցիչները, մանկավարժական աշխատողները, ծնողները կամ սովորողի օրինական ներկայացուցիչը, դպրոցում համապատասխան առարկայական ուսուցչի բացակայության դեպքում՝ ՀՈԻԿ-ի՝ առարկայական մասնագետները:
- Հեռավար կրթական ծրագրերի բովանդակությունը չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշչով սահմանվածից:

### **Հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել հետևյալ դեպքերում**

- Եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:
- Եթե հայտարարվել է արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակ (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն):
- Դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) կամ օտարերկրյա պետություններում ծնողների հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում:
- Այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք:
- Այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից:
- Այն անձանց համար, ովքեր պետք է մասնակցեն էքստեռն կարգով ավարտական քննություններին՝ հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ ստանալու նպատակով:
- Միյուրքում բնակվող, ինչպես նաև Հայաստան վերադառնալ ցանկացող ընտանիքների երեխաների համար, ովքեր լրացուցիչ կրթության միջոցով մտադիր են յուրացնել հիմնական ծրագրեր՝ ՀՀ-ում հանրակրթության մեջ ընդգրկվելու համար:

## **Վարձարություն**

Ամբողջ ուսումնական տարվա համար հեռավար կրթություն կազմակերպող ուսուցիչները վարձատրվում են ուսուցչի մեկ դրույքի չափով, իսկ մնացած դեպքերում՝ ժամավճարով՝ բացառությամբ արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում կազմակերպվող դասերից:

## **Կազմակերպման կարգը**

- Հեռավար ուսուցումը կազմակերպվում է ըստ դասարանների՝ հանրակրթական ծրագրերին համապատասխան, այն ուսումնական հաստատությունում, որտեղ հաշվառված է սովորողը: Եթե տվյալ ուսումնական հաստատությունում բացակայում են հեռավար կրթության կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ դպրոցը չունի տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ, ապա հեռավար կրթություն կազմակերպվում է մեկ այլ ուսումնական հաստատության ուսուցչի կողմից՝ ՀՈՒԿ-ի աջակցությամբ:
- Հեռավար կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց պահանջները կատարած սովորողները գնահատվում են՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
- Հեռավար կրթության ուսուցման գործընթացը կազմակերպվում է ուսումնական հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցին համապատասխան, իսկ ուսումնական գործընթացի կազմակերպման պատասխանատուն տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալն է:
- Յուրաքանչյուր աշակերտի համար կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ուսումնական հաստատությունը կամ ՀՈՒԿ-ը բացում է անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով:
- Հեռավար կրթության միջոցով ուսուցումը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների 70%-ը աշակերտների ոչ պակաս քան 90%-ը յուրացնում են ՏՀՏ միջոցով: Հեռավար կրթության գործընթացից դուրս մնացած աշակերտների համար դասերի յուրացումը կատարվում է անհատական պարապմունքների միջոցով՝ ուսումնական հաստատության կամ ՀՈՒԿ-ի սահմանած եղանակով:

- Հեռավար կրթության ընթացքում սովորողների ընդունելությունը, ինչպես նաև փոխադրումը, տեղափոխումը, ազատումը ուսումնական հաստատությունն իրականացնում է առկա ուսուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հեռավար ուսուցման ուսումնամեթոդական նյութերը տեղադրվում են հեռավար ուսուցման համալիր էջում՝ heravar.armedu.am, որն հասանելի է բոլոր ուսումնական հաստատությունների համար: Ուսումնական հաստատությունը սեփական նախաձեռնությամբ կարող է մշակել նոր ուսումնամեթոդական նյութեր՝ առարկայի ծրագրին, ուսումնական պլանին և պետական չափորոշչին համապատասխան:

**1. 2. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀԱՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-Ն ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ:**

Հեռավար ուսուցման ներդրումը պայմանավորված է որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ: Գոյություն ունեցող ուսուցման ձևերը տնտեսական և կազմակերպչական տեսանկյունից թույլ չեն տալիս գործնականում նման կրթություն ապահովել, սակայն հեռավար ուսուցումը, որը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման վրա, լուծում է այդ խնդիրը:

Հեռավար ուսուցումը կրթություն ստանալու որակապես նոր ձև է, որն առաջացել է XX դարի վերջում՝ շնորհիվ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Գիտական տեսանկյունից կրթություն ստանալու այս ձևն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում, քան հեռակա կրթությունը: Այն չի համարվում հեռակա ուսուցման կատարելագործված ձև:

Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

Հեռավար ուսուցման նպատակը բարձրագույն մասնագիտական կրթական հաստատությունների սովորողներին հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում:[1]

Աշխարհում նոր տեսակի կորոնավիրուսի (COVID 19) բռնկումը մեծ փոփոխություններ բերեց սոցիալական փոխհարաբերություններում և դրանց կազմակերպման գործընթացում: Կրթական հաստատությունները և բացառություն չկազմեցին:

2020 թ. մարտի 13-ին ՀՀ Կառավարությունում կայացած ընդլայնված խորհրդակցությունից հետո ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարար Ա. Հարությունյանը ֆեյսբուքյան ուղիղ եթերի ժամանակ, հաշվի առնելով կորոնավիրուսի տարածման կանխարգելման միջոցառումների անհրաժեշտությունը և ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված ցուցումները, խոսեց դասերը դադարեցնելու մասին: ԿԳՄՍ նախարարը կոչ արեց բոլոր կրթական, մշակութային և մարզական կազմակերպություններին ինքնակազմակերպվել, մշակել գործուն և հնարավորինս արդյունավետ մեխանիզմներ ոչ միայն կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու համար, այլ նաև նշված օրերին ուսումնական գործընթացը հեռավար եղանակով կազմակերպելու գործում: Չնայած այն հանգամանքին, որ դպրոցահասակ երեխաները, համեմատած տարեցների հետ, ավելի քիչ ռիսկային են հիվանդության տեսանկյունից, սակայն «սոցիալական հեռավորության» պահպանումն ու «ինքնամեկուսացումը» կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումներ են, ուստի առկա դասապրոցեսի դադարեցման որոշումն ուղղված էր հենց այս՝ հիվանդության տարածման կանխարգելմանը:

Արդյունքում, կրթական գործընթացի անընդհատության խնդիր ի հայտ եկավ, որի լուծման համար էլ կարճ ժամանակահատվածում ԿԳՄՍ նախարարությունը սկսեց քննարկել հանրակրթության ոլորտում հեռավար ուսուցման նախագծի փորձարարական ծրագրի ներդրումը:

Դասավանդման ավանդական մեթոդների և ցանցային հեռավար ուսուցման տեխնոլոգիաների (ՀՈԻՏ) համադրությունը կօգնի ուսուցչին լուծել այս խնդիրը: ՀՈԻՏ-ի կիրառումը դպրոցում երեխաների համար ավելի հետաքրքիր և արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը:

### **Հեռավար կրթության կազմակերպումը COVID 19-ի պայմաններում**

Հեռավար կրթության փորձարարական ծրագրի ներդրման մասին ԿԳՄՍ նախարարի հայտարարությունից հետո սկսվեց աննախադեպ իրարանցում: Ուսուցիչներն ու ծնողները պատրաստակամություն հայտնեցին իրենց ներուժը ներդնել երեխաների կրթության անընդհատությունն ապահովելու գործում:

Այսպես, սկսած մարտի 19-ից ծնողների և ծնողկոմիտեների ջանքերով սոցիալական կայքերի տարբեր հավելվածներում ձևավորվեցին առանձին դասարանների աշակերտների խմբեր: Ծնողները և բարձր դասարանի աշակերտները եռուզեռի մեջ էին: Նույնիսկ այն աշակերտները, ովքեր առանձնապես չէին փայլել իրենց առաջադիմությամբ դասերի ընթացքում, օգնում էին ծնողներին, դասընկերներին, զանգում էին իրար, խորհրդակցում էին, զանգում էին ուսուցիչներին, պայմանավորվում էին նրանց հետ դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական հարցերի կարգավորման շուրջ: Այսինքն, եթե աշակերտներին հնարավորություն է տրվում կիրառելու սեփական հմտություններն, իրենց սոցիալական ակտիվությունն աճում է, և նրանք էլ փորձում են իրենց ներդրումն ունենալ համատեղ իրականացվող գործընթացներում: Սա պետք է այնպայման հաշվի առնել հետագայում՝ թե՛ առկա, թե՛ առցանց դասապրոցեսներում՝ ներդնելով այնպիսի գործողություններ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր աշակերտին իրացնել իր հմտությունները:

Մյուս կողմից, չնայած այն հանգամանքին, որ հանրակրթական համակարգում արդեն կային ներդրված կրթության համակարգման համար առցանց հարթակներ, ամեն դեպքում կարիք կար փնտրելու, ուսումնասիրելու և գտնելու հեռավար կրթության կազմակերպման՝ հաղորդակցման համար անհրաժեշտ և պիտանի նոր գործիքներ, ծրագրեր, որոնց կիրառումը հնարավորություն կտար ապահովել դասապրոցեսին աշակերտների առավել ներգրավվածությունը, հնարավորինս ակտիվ մասնակցությունը, և որ գիտելիքի փոխանցումը չտուժեր դրանից:[3]

Դասավանդման ավանդական մեթոդների և ցանցային հեռավար ուսուցման տեխնոլոգիաների (ՀՈԻՏ) համադրությունը կօգնի ուսուցչին լուծել այս խնդիրը: ՀՈԻՏ-ի կիրառումը տարրական դպրոցում երեխաների համար ավելի հետաքրքիր և արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը:

Հեռավար կրթությունը աշխատելու շատ հարմար և օգտակար ձև է:

### **Հեռավար կրթության առավելություններն են.**

- Սովորել անհատական կերպով - սովորելու արագությունը որոշում է հենց սովորողը՝ կախված նրա անձնական հանգամանքներից և կարիքներից,



- ազատություն և ճկունություն – սովորողը կարող է ինքնուրույն պլանավորել դասերի ժամանակը, վայրը և տևողությունը,
- շարժունակություն - ուսուցչի և աշակերտի միջև հետադարձ կապի արդյունավետ իրականացումը ուսումնական գործընթացի հաջողության հիմնական պահանջներից և հիմքերից մեկն է,
- արտադրողականություն - տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վերջին նվաճումների կիրառումը ուսումնական գործընթացում,
- ստեղծագործականություն - սովորողի ստեղծագործական ինքնարտահայտման հարմարավետ պայմաններ,
- ուսուցչի ծանրաբեռնվածության թեթևացում - (ավելի քիչ ժամանակ է ծախսվում աշակերտի աշխատանքը ստուգելու և գնահատելու վրա):

Հարկ է նշել, որ հեռավար ուսուցումը հիմնված է բազմամակարդակ ուսուցման մանկավարժական տեխնոլոգիաների, տարբեր կրթական տարածքներում դպրոցականների ինքնակրթության անկախության, ուսուցչի և աշակերտի փոխազդեցության տարբեր ձևերի և մեթոդների համադրության վրա:

Հեռավար ուսուցման ձևերի կիրառումը նախատեսված է տարբեր մակարդակների սովորողների հետ աշխատելու համար.

- աշխատանք հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ,
- աշակերտների գիտելիքների ուղղում,
- աշխատանք շնորհալի երեխաների հետ:

- ՀՈՒՏ-երն ապահովում են առողջության պահպանման միջավայր՝ վերապատ- րաստման ընթացքում հարմար ժամանակ և իրագործելի ռեժիմում (ենթակա են ժամանակի սահմանափակումների),
- այլընտրանքային ուսուցում. այն ընդլայնում է դասավանդման ձևերի և մեթոդ- ների ընտրությունը, բացի դասարանային ուսուցման համակարգում ընդունված- ներից,
- լրացուցիչ կրթություն. խորացնում և ընդլայնում է գիտելիքների ներկայացման նախապատրաստման կամ օլիմպիադաներին մասնակցելու համար,
- ժողովրդավարական և ստեղծագործ կրթություն. չկան խիստ կանոնակարգեր, յուրաքանչյուր սովորողին հատուկ ուշադրություն է դարձվում, մեծանում է նրա հետաքրքրությունը և ինքնակրթության մոտիվացիան:

Ամփոփելով նշենք, որ հեռավար և ավանդական առկա կրթության համադրու- թյունը ավելի ու ավելի հեռանկարային է: Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական գործընթացում դպրոցականների ընդգրկման արդյունքում նրանք զարգացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու հմտություններ և զարգացնում են գործնական հմտությունների նախադրյալներ իրենց կյանքի ընթացքում:

Ներկայումս տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ հնարավոր է դառնում կրթություն ստանալ հեռակա կարգով: Հեռավար կրթության տեխնոլոգիաները (ՀԿՏ) այն տեխնոլոգիաներն են, որոնք օգտագործվում են տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հետ միասին, մասամբ կամ ամբողջությամբ միջնորդավորված փոխազդեցությամբ, այսինքն՝ հեռավորության ընթացքում սովորող և ուսուցիչ փոխազդեցությունը: Նման տեխնոլոգիաների օգտագործումը կրթության գործընթացն ավելի արդյունավետ է դարձնում:

ՀՈՒՏ-ը թույլ է տալիս շատ ավելի հաջող «լրացնել բացերը», եթե սովորողը ինչ-ինչ պատճառներով ստիպված է եղել բաց թողնել դասը: Այս պատճառները ներառում են.

- երեխայի հիվանդություն,
- քրոնիկ հիվանդությունների սրացում,
- հաշմանդամություն՝ կապված սահմանափակ շարժունակության հետ:

Այսօր առողջության պատճառով դպրոց չհաճախող երեխաների թվի ավելացման միտում կա, ուստի այդպիսի երեխաների կրթության անհատականացման խնդիրն ավելի է սրվում: Հեռավար կրթությունը լուծում է այս խնդիրը: Հեռավար ուսուցումը կրթության մի տեսակ է, որը հիմնված է իրարից հեռու գտնվող ուսուցիչների և սովորողների կրթական փոխազդեցության վրա, ինչը իրականացվում է համակարգ-գիշերի, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և համացանցային ռեսուրսների օգնությամբ՝ հեռավար: Նման դասընթացը ներառում է ուսումնական գործընթացին բնորոշ վերապատրաստման համակարգի բոլոր բաղադրիչները՝ իմաստը, նպատակները, բովանդակությունը, կազմակերպական ձևերը, վերապատրաստման գործիքները, արդյունքների դիտարկման և գնահատման համակարգը: Հեռավար ուսուցումը պարզ-վում է տնտեսապես շահավետ է՝ հաշվի առնելով առկա կրթության ամբողջ համակարգի՝ տրանսպորտային և կազմակերպչական ծախսերը: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումների XXI դարում ավագ դպրոցի աշակերտները իրենց ժամանակի միայն 30-40%-ը կանցկացնեն դպրոցում, 40%-ը հատկացված կլինի հեռավար ուսմանը, իսկ մնացած ժամանակը՝ ինքնակրթությանը:

Հարկ է նշել, որ հեռավար ուսուցման միջոցով երեխայի համար բացվում են նոր հնարավորություններ, ընդլայնվում են նրա տեղեկատվական տարածքը և տեղեկատվական ոլորտը, զարգանում են ստեղծագործական և որոնողական աշխատանքները: Ելնելով վերոգրյալից՝ մենք կարող ենք եզրակացնել դպրոցում հեռավար ուսուցման հեռանկարների մասին: Այս պայմանները ենթադրում են մանկավարժի առկայություն, որը մշտական օգնություն կցուցաբերի երեխային՝ ուսուցանելով նրան կրթական աշխատանքի հիմնական մեթոդները և ուղեկցելով անհատական կրթական ուղով: Սովորեցնողը պարտադիր չէ՝ մանկավարժ լինի. ծնողը նույնպես կարող է հանդես գալ այս դերում:

## **Հեռավար ուսուցման թերություններն են.**

- 1) Բացակայում է սովորողի և դասախոսի միջև անմիջական հաղորդակցումը:
- 2) Դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում: Իսկ երբ սովորողի կողքին չկա մեկը, որը կարող է ոգևորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա:
- 3) Հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար:
- 4) Բարձր պահանջներ է ներկայացվում ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, բավական բարդ է ունկնդիրներին շահարդելու խնդիրը:
- 5) Հեռավար ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելն է: Քանի դեռ չեն առաջարկվել օպտիմալ տեխնոլոգիական լուծումներ, հեռավար ծրագրերի մեծ մասը ենթադրում է առկա քննական շրջան, քանի որ դժվար է ասել, թե ով է կապի մյուս կողմում: Այդ խնդիրը մասնավորապես լուծվում է տեսախցիկների օգնությամբ, ինչը, սակայն, լիարժեք լուծում չէ:
- 6) Անհրաժեշտ են մի շարք անհատական և հոգեբանական պայմաններ, նաև խիստ ինքնակարգապահություն, իսկ դա ուղղակիորեն կախված է սովորողի ինքնուրույնությունից և ինքնագիտակցությունից:
- 7) Սկզբնական շրջանում բավական մեծ են հեռավար ուսուցման համակարգի ստեղծման և տեխնիկական ապահովման ծախսերը:
- 8) Բավական տարողունակ է հեռավար ուսուցման համապատասխան դասընթացների մշակման գործընթացը: Այստեղ մեծ դեր ունի համաշխարհային որոնողական ցանցը՝ Google-ը:
- 9) Տեխնիկական սահմանափակ հնարավորությունների և մոդեմների դանդաղ աշխատանքի պատճառով ձայնը, պատկերը և գրաֆիկան հաճախ ուշացումով են տեղ հասնում, թեպետ համապատասխան տեխնոլոգիաներն անընդհատ բարելավվում են:

## **ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ:**

**Տորս մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են մեր կամքից անկախ, ներառյալ բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, սուր վարակիչ հիվանդությունները, եղանակային պայմանները, որոնք խոչընդոտում են ուսումնական հաստատության գործունեությունը: Այսպես օրինակ կորոնավիրուսի տարածումով պայմանավորված ճգնաժամային իրավիճակը թե՛ամբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր: Ստեղծվեց մի այնպիսի իրավիճակ, որ առկա ուսուցումը այլևս հնավոր չէր իրականացնել, բայց անհրաժեշտ էր ապահովել յուրաքանչյուր աշակերտի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով: Այստեղ օգնության եկան տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները: Օգնեց նաև այն, որ Հայաստանում վերջին 10 տարիներին ստեղծվել էին բավականաչափ ռեսուրսներ, ինչպես Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գտնվող Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ/ այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների և անհատների կողմից:

### **Խոսելով խնդիրների մասին շատ կարևոր է նշել , որ**

1. Թե՛ ուսուցիչները և թե՛ աշակերտները տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու խնդիր ունեն: Ուսանելու համար թվային սարքավորումներից օգտվելու համար տարրական դասարաններում սովորողը, բնավ, պատրաստ չէ: Նույնը վերաբերում է նաև որոշ ուսուցիչների:
2. Թվային տեխնոլոգիաների և հեռավար դասերի հետ համատեղ առաջ է եկել **կիրառանվտանգության՝ համացանցից անվտանգ օգտվելու խնդիրը:** Հեռավար կրթության անցման առաջին օրերին շատ մեծ էր ոգևորությունը և ուսուցիչները, ծնողները, երեխաները անմիջապես սկսեցին նկարներ տարածել, թե ինչպես են երեխաները առցանց դասին մասնակցում: Երեխաները նաև սկսեցին գրանցվել տարբեր հարթակներում՝ բացելիքաց տեղադրելով իրենց բոլոր անձնական տվյալները: Սա խնդիր է, որն առանձին կրթությունն և տեղեկացվածություն է պահանջում:

3. Անհրաժեշտորակյալ դասերի պատրաստում և բոլոր երեխաների համար դրանց հասանելիության ապահովում: Առանձին աշխատանք պետք է իրականացվի տարրական դասարանների ուսուցիչների հետ, որպեսզի դասերը ինտերակտիվության տարրեր պարունակեն և երեխաների համար ավելի գրավիչ ու հասկանալի լինեն;
4. Հեռավար կրթության բացասական հետևանքներից է նաև երկար ժամանակ և մոտ տարածությունից էկրանի դիմաց նստելը, որը վատ է անդրադառնում տեսողության վրա: Համակարգչով աշխատելիս աշակերտը հայացքը կենտրոնացնում է որոշակի օբյեկտի վրա: Ուշադիր հետևելով էկրանին՝ հազվադեպ է թարթում, ինչի հետևանքով չորանում է աչքի լորձաթաղանթը: Ցավոք, տեսողության մեջ փոփոխություններ են ի հայտ գալիս, աչքերում զգում են չորություն, տեսողության վատացում, գլխացավ: Տարրական դասարանի սովորողի աչքերի և համակարգչի միջև հեռավորությունը պետք է լինի 70սմ-ից ոչ պակաս:[4]

### **Ներթիկետի կանոններ**

1994 թվականին լույս աշխարհ է եկել netiquette գիրքը, որում ձևակերպվել են նետիկետի տասը հիմնական կանոնները, որոնց հետևելը զգալիորեն կթեթևացնի կյանքը ինչպես ձեր, այնպես էլ շրջապատի համար:

### **Ներթիկետի կանոնները տասն են:**

#### **Կանոն 1. Հիշեք, որ Դուք շփվում և հաղորդակցվում եք մարդու հետ:**

Առաջին կանոնը մեզ հիշեցնում է, որ մենք հաղորդակցվում ենք մարդու հետ և միշտ պիտի հիշենք ոսկե կանոնը՝ «Մի արեք ուրիշներին այն, ինչ դուք չեք ուզում ստանալ նրանցից ինքներդ. Դրեք ձեզ այն մարդու տեղը, ում հետ խոսում եք : Պաշտպանեք Ձեր տեսակետը, բայց մի վիրավորեք շրջապատին» :

#### **Կանոն 2.Պահպանեք այն նույն վարքագծի նորմերն ու չափանիշները, որոնք գործում են կյանքում:**

Երկրորդ կանոնում նշվում է, որ մենք պահպանենք այն նույն վարքագծի նորմերն ու չափանիշները, որոնք գործում են կյանքում, 141սինքն անհրաժեշտ է պահպանել հաղորդակցման էթիկան, ինչպես նաև մնալ օրենքի շրջանակներում, ինչպես իրական,

այնպես էլ վիրտուալ տարածքում: Մենք պետք է լինենք օրինակելի մեր վարքագծով, խոսելաձևով, վերաբերմունքով ու վարքագծի բոլոր նորմերով:

**Կանոն 3. Միշտ հիշեք, թե որտեղ եք Դուք գտնվում:**

Երրորդ կանոնը մեզ հիշեցնում է, թե որտեղ ենք մենք գտնվում: Նեթիկետը փոխվում է մեկ համակարգչից դեպի այլ համակարգիչ: Այն, ինչ ընդունված է կոնկրետ մարդկանց հետ շփվելու ընթացքում կարող է անընդունելի լինել այլոց համար:

**Կանոն 4. Հարգեք ուրիշների ժամանակն ու հնարավորությունները:**

Չորրորդ կանոնը վերաբերում է ուրիշների ժամանակն ու հնարավորությունները հարգելուն: Այսինքն մենք պարտավոր ենք հաշվի առնել դիմացինի հնարավորություններն ու գնահատել նրանց ժամանակը առանց տարիքային սահմանափակման:

**Կանոն 5. Պահպանեք Ձեր դեմքը, երբեք մի «դավաճանեք» ինքներդ ձեզ:**

Հինգերորդ կանոն՝ մենք պետք է չկորցնենք մեր յուրահասկությունը և պահպանենք մեր դեմքը:

**Կանոն 6. Օգնեք մյուսներին այնտեղ, որտեղ կարող եք՝ խորհուրդով, բարի խոսքով, աջակցությամբ, այլ ձևերով:**

Վեցերորդ կանոնը մեզ հիշեցնում է օգնել դիմացինին : Այսինքն եթե դուք տեսաք հարցը և կարող եք պատասխանել դրան, պատասխանեք: Եթե դուք պատահաբար հայտնաբերել եք, որ ինտերնետում բացակայում է մի բան, որը դուք լավ գիտեք, գրեք դրա մասին: Իսկ եթե ձեր հարցերին ոչ ոք երբևէ չի պատասխանել, չի պատմել ինչ-որ անհրաժեշտ բան կամ չի օգնել, շարունակեք պատասխանել, պատմել և օգնել : Աշխարհը դառնում է ավելի լավը, երբ մենք օգնում ենք ուրիշներին, իսկ մենք՝ ավելի երջանիկ :

**Կանոն 7. Մի ներգրավվեք և մի ստեղծեք կոնֆլիկտներ համացանցում:**

Յոթերորդ կանոն՝ չպետք է ստեղծել կոնֆլիկտներ համացանցում: Ընդհակառակը մենք պետք է խուսափենք վիճաբանություններից և սովորողների մեջ սերմանենք հանդուրժողականություն, բարյացակամություն:

**Կանոն 8. Հարգեք մասնավոր նամակագրության գաղտնիության իրավունքը:**

Ութերորդ կանոնը հիշեցնում է, որ ցանցում այլ մարդկանց անձնական տեղեկությունները արգելվում է տարածել՝ անուններ, հասցեներ, հեռախոսներ, լուսանկարներ: Այն մեզ հիշեցնում է պահպանել նամակագրության գաղտնիության իրավունքը: Այսինքն մենք պարտավոր ենք պահպանել նամակագրության գաղտնիությունը :

**Կանոն 9. Մի չարաշահեք և մի գերազնահատեք սեփական հնարավորությունները:**

Իներորդ կանոն՝ չպետք է չարաշահել և գերազնահատել սեփական հնարավորությունները: Պետք է հնարավորինս լինել խոհեմ և, դրանով իսկ, ճիշտ օրինակ լինել նոր ձևավորվող անհատների համար:

**Կանոն 10: Սովորեք ներել ուրիշների սխալները:**

Եվ վերջին տասներորդ կանոնը մեզ հիշեցնում է սովորել ներել ուրիշների սխալները: Մարդը ծնված օրվանից մեղսավոր է և գործում է սխալներ, որոնք մենք պարտավոր ենք ներել, այս կերպ կստիպենք զղջալ այդ սխալների համար:

Այս կանոնները շատ ուսուցողական բնույթ են կրում և դրանց գործածությունը խիստ պարտադիր է:

**Ինչ չի կարելի անել համացանցում.**

- ❖ Մի օգտագործեք համացանցը՝ այլ մարդկանց վնասելու նպատակով;
- ❖ Մի խանգարեք և մի խառնվեք համացանցերի այլ օգտագործողների աշխատանքին;
- ❖ Մի օգտագործեք Ձեր համացանցը գողության նպատակով;
- ❖ Մի օգտագործեք համացանցը կեղծ տեղեկություններ տարածելու նպատակով;



- տարրական դասարանների ուսուցիչների տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես հեռավար ուսուցման կազմակերպման կարողությունների կոմպետենսցիաների առկայությունը:
- Հեռավար դասերի հետ համատեղ համացանցի անվտանգ օգտվելու
- կիրառանվտանգության ապահովումը:
- Կրտսեր դպրոցականների հեռավար ուսուցման ժամանակահատվածի, դասերի տևողության՝ 45 րոպեի անցումն է 35 րոպեի, որից 5-10րոպեն անհարժեշտ է վալեդոգիական տեսանկյունից լիցքաթափվել, և էկրանից հեռանալ:
- Կիրառանվտանգության տեսանկյունից անհրաժեշտ մեծահասակի առկայությունը հեռավար ուսուցման ժամանակ:
- Ուսուցիչների կողմից հեռավար ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ինտերակտիվ մեթոդների կիրառումը՝ մասնավորապես <<Շրջված դասարան մեթոդի>> կիրառումը:
- Տարրական դասարանների սովորողների համար անհրաժեշտ է պահպանել հեռավորությունը համակարգչից՝ 70սմ-ից ոչ պակաս:

#### **ՀՈՒԿ-ի Կազմակերպման կարգը**

- Հեռավար ուսուցումը կազմակերպվում է ըստ դասարանների՝ հանրակրթական ծրագրերին համապատասխան, այն ուսումնական հաստատությունում, որտեղ հաշվառված է սովորողը: Եթե տվյալ ուսումնական հաստատությունում բացակայում են հեռավար կրթության կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ դպրոցը չունի տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ, ապա հեռավար կրթություն կազմակերպվում է մեկ այլ ուսումնական հաստատության ուսուցչի կողմից՝ ՀՈՒԿ-ի աջակցությամբ:
- Հեռավար կրթության ուսուցման գործընթացը կազմակերպվում է ուսումնական հաստատության տնօրենի հաստատած ժամանակացույցին համապատասխան, իսկ ուսումնական գործընթացի կազմակերպման պատասխանատուն տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալն է:
- Հեռավար կրթության միջոցով ուսուցումը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների 70%-ը աշակերտների ոչ պակաս քան 90%-ը յուրացնում են ՏՀՏ միջոցով: Հեռավար կրթության գործընթացից դուրս մնացած աշակերտների համար դասերի յուրացումը կատարվում է

անհատական պարապմունքների միջոցով՝ ուսումնական հաստատության կամ ՀՈՒԿ-ի սահմանած եղանակով:

- Հեռավար կրթության ընթացքում սովորողների ընդունելությունը, ինչպես նաև փոխադրումը, տեղափոխումը, ազատումը ուսումնական հաստատությունն իրականացնում է առկա ուսուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հեռավար ուսուցման ուսումնամեթոդական նյութերը տեղադրվում են հեռավար ուսուցման համալիր էջում՝ heravar.armedu.am, որն հասանելի է բոլոր ուսումնական հաստատությունների համար: Ուսումնական հաստատությունը սեփական նախաձեռնությամբ կարող է մշակել նոր ուսումնամեթոդական նյութեր՝ առարկայի ծրագրին, ուսումնական պլանին և պետական չափորոշչին համապատասխան:


## ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

### 2. 1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1-ին քայլ- դպրոցի մանկավարժներին ենք ներկայացրել մի քանի հարցից կազմված հարցաթերթիկ, որի նպատակն էր պարզել մանկավարժների վերաբերմունքը, կարծիքները և առաջարկությունները հեռավար ուսուցման կազմակերպման մանկավարժական պայմանները կրտսեր դպրոցում խնդրի վերաբերյալ:

#### 1. Ի՞նչ ծրագրով եք անցկացնում անգլերենի առցանց դասերը:




18

**Գծապատկեր 1.** Առաջին հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե արդյոք ի՞նչ ծրագրով են անցկացնում անգլերենի առցանց դասերը: Հարցմանը մասնակից ուսուցիչները

պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 34%-ը նշել են, որ առցանց դասերը անցկացնում են Zoom ծրագրով, 23%-ը առցանց դասերի ժամանակ կիրառում են Meet ծրագիրը, Viber ծրագիրը կիրառում են նրանց 19%-ը, Massanger-ը՝ 13-ը, իսկ hangouts meet ծրագրից


օգտվում են հարցման մասնակից դասվարների 11%-ը: Այսպիսով ուսուցիչների մեծամասնությունը առցանց դասերը անցկացնում է Zoom ծրագրով:

**2. Որքանո՞վ էիք պատրաստ հեռավար ուսուցմանը:**




Վերոհիշյալ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե առկա ճգնաժամային իրավիճակում իրականացված հեռավար ուսուցմանն արդյոք նրանք պատրաստ են եղել. 30%-ը նշել է՝ եղել է լիովին պատրաստ, 54%-ը՝ մասամբ էր պատրաստ՝ անցում կատարելու հեռավար ուսուցմանը, իսկ մյուս 16%-ը՝ առհասարակ պատրաստ չի եղել:

**3. Արդյոք բոլոր աշակերտներն են մասնակցում հեռավար ուսուցմանը:**




Մեզ առավել հետաքրքրող հարցերից մեկին, թե արդյոք բոլոր աշակերտներն են մասնակցել հեռավար ուսուցմանը, ուսուցիչները պատասխանեցին, որ աշակերտների միայն 58% է մասնակցել դասին: Պատասխանը մտահոգիչ էր:

**4. Ձեր կարծիքով, որո՞նք են հեռավար ուսուցման դրական կողմերը:**




Վերոհիշյալ հարցին, թե որոնք են հեռավար ուսուցման կողմերը հարցին հարցախույզի մասնակից դասվարները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 56%-ը նշում է, որ ծնողն է բացահայտում երեխայի ուժեղ և թույլ կողմերը, 23%-ը ապահովում է յուրաքանչյուր երեխայի մասնակցությունը դասապրոցեսին, 21%-ը զարգացնում է երեխայի մեղիագրագիտության մակարդակը:

**5. Որո՞նք են հեռավար ուսուցման բացասական կողմերը:**



Հաջորդ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե որոնք են հեռավար ուսուցման բացասական կողմերը, հարցվողների 39%-ը բացասական կողմերից է համարում այն, որ բացակայում է միմյանց հետ կենդանի շփումը: 30%-ը կարծում է, որ հեռավար ուսուցումը վնասում է երեխայի առողջությունը: Ըստ 14 %-ի՝ արդյունավետորեն չեն գնահատվում երեխայի գիտելիքները, 4%-ը համարում է, որ նկատվում է առաջադիմության կորուստ, 8%-ը կարծում է, որ մեծանում է ծանրաբեռնվածության աստիճանը, 5%-ը նշում է աշակերտների շրջանույժ համապատասխան տեխնիկաների (տեղեկատվական տեխնոլոգիաների) անհասանելիությունը:


6. Արդյոք հեռավար ուսուցման շրջանակներում աշակերտները յուրացնում են ամբողջական ուսումնական նյութը:



Հարցաթերթիկի հետևյալ հարցին, թե՞ աշակերտները ամբողջությամբ յուրացնում են ուսումնական նյութը հեռավար ուսուցման շրջանակներում հարցի վերլուծությունից պարզեցինք, որ 58%-ը բավականաչափ է յուրացնում, 22 %-ը՝ լիովին, իսկ մյուս 20%-ը չի յուրացնում:


7. Էլեկտրոնային միջոցներն օգտագործելիս ինչ գործառույթներ եք իրականացնում երեխաների առողջությունը չվնասելու համար:

Մեզ հետաքրքրում էր նաև, թե ինչ գործառույթներ են իրականացնում ուսուցիչները առցանց հարթակում երեխաների առողջությունը չվնասելու համար:




Ինչպես երևում է տրամագրում տրված պատասխանների ցուցանիշներից, ուսուցիչները մտահոգ են և իրականացնում են մի շարք միջոցառումներ, առաջադրանքներ, որպեսզի չվնասեն երեխաների առողջությունը էլեկտրոնային միջոցների կիրառման ժամանակ: Ինչպես գիտենք կրտսեր դպրոցական տարիքում չի խրախուսվում 20 րոպեից ավելի նստել համակարգչի կամ որևէ այլ գաջետի առջև և նպատակահարմար է պարբերաբար կատարել աչքերը հագստացնող վարժություններ, իսկ դասի ավարտից հետո խորհուրդ տալ երեխաներին մի քանի րոպե լինել այնպիսի սենյակում, որը լուսավորվում է բնական լույսով:

8 Նշե՛ք խնդրեմ, թե որ, առարկայի դասագործընթացում եք կիրառո՞ւմ տեղեկատվական տեխնոլոգիաներ:




Հարցին թե՞ որ, առարկայի դասագործընթացում եք կիրառո՞ւմ տեղեկատվական տեխնոլոգիաներ հարցախույզի մասնակից ուսուցիչները, պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 36%-ը մայրենիի դասին է կիրառում, 31%-ը՝ մաթեմատիկա, 25%-ը էս և շրջակայի դասին, 8%-ը կիրառում է այլ առարկաների դասաժամին:

9. Հեռավար դասերի ընթացքում ինչպիսի՞ տեղեկատվական տեխնոլոգիաներ եք կիրառում:



Այն հարցին, թե ինչպիսի՞ տեղեկատվական տեխնոլոգիաներ են կիրառում մայրենիի դասի ընթացքում, ուսուցիչների 33%-ը նշել են Power point ծրագիր, 25%-ը՝ էլեկտրոնային գրքեր, 15 %-ը տեսաֆիլմեր և ամարթ գրատախտակ, 10%-ը e-school, իսկ 2%-ը՝ Learnpro ծրագիրը:

10. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում ի՞նչ դժվարություններ են առաջանում:



Վերոհիշյալ հարցին դասվարները պատասխանել են հետևյալ կերպ. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում, ուսուցիչների 57%-ը նշել է տեխնիկական խնդիրները 35%-ը՝ SS ոլորտում հմտությունների պակասը, իսկ մյուս 8%-ը դժվարություններ չի ունեցել:

Այս հետազոտությունը մեզ բերեց այն եզրակացության, որ հարցման մասնակիցների կեսից ավելին մայրենիի դասերի ընթացքում կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ և հիմնականում կշռադատման փուլում: Կիրառվում են Power Point ծրագիրը, էլեկտրոնային գրքեր, սմարթ գրատախտակ և այլն: Հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը զգալիորեն հեշտացնում է մայրենիի դասերի նախապատրաստումը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր դիտարկումների ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կիրառումը նպաստում է տարրական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Վերլուծելով մեր կատարած դիտարկումները եզրակացրինք հետևյալը.

1. Հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ տեսական դրույթների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ժամանակակից դպրոցում էլեկտրոնային բազմազան ուսումնական ռեսուրսների կիրառումը դառնում է անխուսափելի: Նման մոտեցումը ևս մեկ անգամ հաստատում է, որ մերօրյա տարրական դպրոցում էլեկտրոնային ուսումնական նյութերի նպատակային կիրառումը առաջին հերթին կապահովի ուսումնական նյութի յուրացման մակարդակի բարձրացումը, կնպաստի կրտսեր դպրոցականների մեղիագրագիտության ձևավորմանը, տրամաբանական, վերլուծական կարողությունների զարգացմանը:

2. Իրականացրած էմպիրիկ հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հարցմանը մասնակցած ուսուցիչները կարևորում են էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների ինտեգրումը տարրական դպրոցի ուսուցման գործընթաց: Սակայն, հաճախ ենք բախվում այն իրողության հետ, որ ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում մեղիագործիքներին և վերապատրաստումների կազմակերպումը դառնում է անհրաժեշտություն:

3. Մեր կողմից մշակված դասերի փորձարկումը թույլ է տալիս հիմնավորել, որ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներն ավանդական ուսուցումը լրացնող արդյունավետ միջոցներ են: Դրանք նպաստում են սովորողների ճանաչողական ակտիվության, վերլուծական կարողությունների ձևավորմանը, օգնում ուսումնական նյութի ավելի արագ յուրացմանը, ստեղծում դրական տրամադրվածություն առարկայի, ուսուցման գործընթացի նկատմամբ: Էլեկտրոնային ուսումնական ռեսուրսները թույլ են տալիս անհրաժեշտության դեպքում վերադառնալ դասի առանձին կարևոր պահերին, ապահովել առավել մեծ ներգրավվածություն և ինտեգրել ավանդական և ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ն.Զ., «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր.ԱՐՏԱԳԵՐՍ, 2016., 226 էջ:

2. Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004:

3. Իննովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում. Գիտական հոդվածների ժողովածու - Եր.: Նաիրի, 2018. - 544 էջ:

4. Խ. Բեգիրջյան, Վ. Խաչատրյան, Գ. Հովհաննիսյան, Ս. Բաբայան. Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու - Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2017թ. - 152 էջ:

5. Հայրապետյան Գ. Ս., Մարգարյան Ս. Մ., Ինտեգրացիան որպես ինտելեկտուալ դաստիարակություն տարրական դպրոցում մաթեմատիկայի դասին: Գիտական տեղեկագիր, N 1-2/ 26-27/ ք. Եր., 2016, - 182 էջ:

6. Հ. Բ. Մեհրաբյան, Կրտսեր դպրոցականների մաթեմատիկական հետաքրքրությունների ձևավորումը, Երևան, Լույս, 1981, 67 էջ:

7. Թովուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Պողոսյան Լ. Մ., Ասատրյան Ս. Մ., Անտոնյան Լ. Ա., Ղազարյան Մ. Ջ., Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երեւան, 2018:

8. Մեդիակրթությունը տարրական դպրոցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և ծնողների համար / Թովուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Ասատրյան Ս. Մ., Պողոսյան Լ. Մ., Կարապետյան Ն. Ջ., Ավագյան Լ. Մ. - Երևան, «Գիտություն» հրատ., 2019, - 120 էջ:

9. «Новые информационные технологии для образования». Институт ЮНЕСКО по информационным технологиям в образовании. Москва. 2000.

10. Женина Л. В., Маткин А. А. История // Методические рекомендации по использованию

- информационно-коммуникационных технологий в цикле социально-экономических дисциплин в общеобразовательной школе / под ред. И. Г. Семакина. — Пермь: издательство ПРИПИТ, 2004.
11. Информатизация общего среднего образования: Научно-методическое пособие / под ред. Д. Ш. Матроса. — М.: Педагогическое общество России, 2004.
  12. Каретникова Н. А. Опыт реализации современных педагогических технологий в преподавании предметов начальной школы. — Сыктывкар, 2008.
  13. Концепция модернизации российского образования на период до 2010 года <http://www.ug.ru/02.31/t45.htm>.
  14. Макарова Н.М., «Информатика и ИКТ» учебник (начальный уровень). С.П., 2010г.
  15. Меняев М.Ф. – Информационные ресурсы: учебное пособие –Омега-Л – 2003.
  16. Минеева Т. Ф. Информатика в начальной школе. //Начальная школа 200., № 11.
  17. Михеева М.В. – Практикум по информационным технологиям в профессиональной деятельности – Гриф – 2005.
  18. Федотова Е.Л. – Информационные технологии в профессиональной деятельности – Инфра-М – 2008.
  19. Хуторской А.В. «Информатика и ИКТ в начальной школе». Методическое пособие,М, 2009.
  20. Janssen D.H/1996/ Handbook of research for Educational Communications andTechnology.
  21. Bitter G.Pierson/Using Tecnology in the Classroom 5 th Edition, Allyana Bacon, Boston
  22. <http://nsc.1september.ru>
  23. <http://www.zankov.ru/>
  24. <http://www.n-shkola.ru/>
  25. <http://school-collection.edu.ru/>
  26. <https://www.unicef.org/armenia/>